

Gs. 204 - Pragatibeh  
Munaysh Vyan

891. 99

S-50

ԳՐ. ՏԵՐ - ՊՈՂԱՍԵՐՆ


Ա/Հ

# Հ Ա Վ Ո Ց Ի Ե Լ Ո Ւ

ՊԱՏՄԻԱԾՔ

ԲԱԼԱԽԱՆՈՒԻ ԿԵՍՆՔԻՑ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՓՈԽԱՐՔՆ



Շ Ո Ւ Շ Ի

Տպարան Մ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆՑԻ Թամիրեան փող. 5

1911

832 EROS JUL 5 5

~~ETOS JUL 5 5~~  
~~PS NOV 2011~~

832 EROS JUL 5  
16 NOV 20  
"Ազատի և ազգային պահպանության մեջ  
Հրաբունիքի աշխատավորության մեջ  
ՀՈՎՈՑԻ ԵԼՈՒ  
1912 դեկ. 20  
Տար Տր. Արքայի աշխատավորության

891.35

Տ-ՏՕԱՆ երեկոյեան, երբ Եղօյին ձերբակալեցին,  
«կազարմայի» մէջ մի դժոխային խլրտում ընկաւ։  
Սովորաբար, ամեն երեկոյ ընթիքն ուտելուց  
պրծնելուց յետոյ, մշակները մի կարճ ժամանակ գեռ  
արթուն էին մնում. մէկը՝ իր չոր լաստի վրայ մեկնը-  
ւած՝ թիկն էր տալիս անկողնին և, աչքերը կէս բաց  
կէս խուփ՝ խոհերի էր անձնատուր լինում, իր օջախը,  
կինն ու զաւակները միտքը զցում. միւսը՝ մի հեռու  
անկիւն քաշւած, ինքն իր համար երգ ու վէրք էր  
բալիս կամ իր սրտի հատորիկի հետ խօսում. միւս-  
ները զբոյց էին անում հանքային չար ու բարու  
մասին,— մինչև որ քունը կըհասնէր, բոլորի ցաւերը  
կըցքէր, բոլորին կըհաւասարեցնէր, «կազարմայի»  
պատերի տակ չոր տախտակների վրայ կըպառկեցնէր  
կըհանգստագննէր։

Այդպիսի մի խաղաղ պահին էր ահա, երբ լուր տարածվեց, թէ եղօյն ձերբակալեցին, և «կազարման» վայրկենապէս էլքտրականացաւ. մի ցնցումով բոլորը ոտքի կանգնեցին: Որը ձեռնափայտը յափըշտակեց գլխատակից. որը, առանց ձեռնափայտի, միայն ձեռքը քաջարի ճօճելով օդի մէջ, նստած տեղից դէպի դուռը սլացաւ. որն էլ գեռ պրպտում էր ցընցոտիների տակից իր գէնքը հանելու, որ կամ մի դանակ էր, կամ ատրճանակ և կամ դաշոյն: Մի քանի ծերունիներ, իրանց ծանրաշարժ քայլերը մոռացած, նոյնապէս շտապելով, խառնեցին աճուխի մէջ. դռան մօտ ստեղծվեց մի խառնիճաղանձ, ան-

կարգ-անկանոն խլրտում. բոլորը ցանկանում էին օգնութեան համնել. ամեն մէկն աշխատում էր ինքն առաջ ընկնել, դունից դուրս գալ, իսկ դուռը չէր շտապում. հաստավինդ, անտարբեր կանգնած՝ նա սեղմում էր երկու կողմից այն ամբոխային հոսանքը և մշակների սիրտն այդ դանդաղութեամբ աւելի էր բորբոքում, աւելի գրգռում:

Կառապաններին, արհեստաւորներին, մշակներին սովորական բան էր ուստիկանատուն ուղարկել. նրանք հարբում, ծուլանում, անկարգութիւն էին անում, զործը ու գործիքը փչացնում. և ոչ ոք չէր վրդովում, ոչ ոք կարեկցութեամբ չէր համակւում, ոեռ ուրախ-ուրախ հանաքներ ու սրախօսութիւններ էին անում դէպքին ու դէմքին յարմար:

Բայց «կազարմայի» այն իրիկւայ խլրտումն ուրիշ բան էր. ով կարող էր մտածել, որ Եղօն էլ մի օր կառապանների պատկին կարժանանայ. այն հաւատաւոր, հեզ, Աստուծոյ գառը Եղօն, որին բոլորը սիրում էին նրա միամտութեան ու խեղճութեան համար. Բայց եղածը եղել-պլծել էր. մշակները ոտքի էին կանգնել, խլրտում ու ժիորը «կազարմայի» ներս ու դուրսը բռնել պաշարել էր. Նրանց տեսնողը կասէր, թէ ահա այս ըոպէին միանգամից մի շնչում կրգնան, կրյարձակւեն, քարուքանդ կանեն, խանութի միջի եղած չեղածը կրցրեն, ամեն ինչ կըջարդեն, կըտրորեն, գետնին կըհաւասարեցնեն, Եղօյի վրէժը կըհանեն: Բայց... մի քիչ յետոյ, երբ նրանք գնացին կանգնեցին խանութի առաջ, երբ կառավարչի թթւած դէմքը տեսան լուսամուտից և նոյն իսկ Եղօյին էլ խեղճացած, ոստիկանների մէջ կանգնած, կալանատուն տանելիս,—բոլորը յետ-յետ քաշւեցին, բոլորի մէջ մի անմեկնելի խորտակում առաջացաւ. ասես՝ մի չար հոգի նրանց մէջ խօսելիս լինէր. «Տե՛ս խանուրը աղայինն է»:

Այդ պատճառով մի քիչ յետոյ նրանք յետ դարձան և «կազարմայի» պատերի տակ միայն անցուգարձ էին անում. բոլորն էլ մոլոր հայեացք ունէին. բոլորի շարժումները կարճ, անվճռական, թոյլ էին. ասես՝ վանդակի մէջ բռնւած, իրանց շուրջը պտոյտ պտոյտ անող գագաններ լինէին նրանք. նրանց շունչը հալւում, սառչում, օդն էր ցնդում. իսկ «կազարմայի» խոժոռագէմ պատերն ու գոները՝ յաղթանդամ, խրոխտ, վերից վար նայում, չափում չափչը գուռմ էին մարդկանց այն տարութերւող յոյզերը և մոայլ, աղօտ լոյսի տակ ասես արհամարհում, քմահարում էին շուրջն ու շրջապատը:

Մութն այդ պահին բռնել էր աշխարհքը և քամին ուժեղ ուժեղ հարւածում էր «կազարմայի» պատերին, բուրգերի լանջերին, երկնամբարձ ծխնելոյզներին ու նասսատներին: Նօրդը անզոււպ աւեր էր տարածում. հեռախօսի թելերն ու սիւները իրար էին անցնում, կտրատւում ու ջարդուում. շողին խողովակների մէջ ջուր էր կտրում. մեքենաները դադարում էին աշխատելուց. կաշեգօտիները թռչում էին անիւներից. էլեքտրական լուսաւորութիւնը խափանուում էր. հանքի կեանքը կանգ էր առնում, իսկ հորերի մէջ ջուր ու մազութը իրար խառնուում, ցեխի ու տղմի փոխւում:

Դրսում ոչ մի արարած չըկար. բոլորը փակւել էին «կազարմաների» յաղթանդամ պատերի մէջ, գոները պինդ կողպել, զլուխները ցնցոտիների մէջ ծածկել պահել:

Այդպէս է հանքը: Վատ եղանակին, եթէ գիշեր է, բոլորն աչքերը փակում են, քնով են անցնում, իսկ ցերեկը մազութի ամբարներում պահւրառում, այս ու այն փոսի մէջ կուչ գալիս, օրը մի կերպ մթնացնում, կեանքը քաշ տալիս:

Բ.

Եղօն և իր ընկերները մշակ մարդիկ էին, մարդի ամբարները մաքրում էին տղմից։ Գործը կեղտուա գործ էր, բայց 50 կոպէկ օրավարձն էլ ուրիշ կերպ ստանալ անհնար էր։ Նրանք համաձայնում էին ամեն նեղութեան, միայն թէ պարապ չըմնային։ Խեղճ մարդիկ էին, բերանը ուտել է ուզում, տունը՝ ապրուստի միջոց, պարտքատէրը՝ հատուցում։ և Եղօն ու նրա ընկերներն առողջ գիւղացիներ էին, աշխատում էին, պարապ չէին մնում, այդ էլ մի բախտ էր նրանց համար։

Նբանք գերանը մէջ տեղից կապում էին սիւնի գլխին, իսկ տակառը կախում էին գերանի մի ծայրից։ կապը շարժական էր։ Երբ գերանի ազատ ծայրը մշակները վերև էին բարձրացնում, միւս ծայրը տակառի հետ միասին իջնում էր գետնափոք ամբարի մէջ։ Յետոյ դրսի մշակները գերանի ազատ ծայրը քաշում էին ցած, տակառը բարձրանում էր ամբարի միջից և նրա միջի տիղմը բաց էին թողնում կողքի ճահիճը։

Այգպէս՝ օրն ի բուն տակառն իջնում էր ցած ու բարձրանում, կրկին իջնում, կրկին բարձրանում։ և ամբարի յատակում, բահը ձեռքին մինչև գոտկատեղը տղմի մէջ խրւած մշակները լցնում հա լցնում էին տակառը, մինչև որ տակը կըբացէր, ամբարը կըմաքըւէր։

Եղօն տակառը լցնող էր. ոտքոտ, կարճահասակ, կլորիկ, առողջ գիւղացի էր, բայց ջլոտ և ուժեղ չէր. ուժեղներն էին զրասում գերանի ծայրը վերև ու ներքև անում։ Եղօն ինքն էլ գոհ էր իր վիճակից. զուրսը կանգնած՝ ջղաձզութեամբ տակառ բարձրացնելը Եղօյի վատն էր գալիս. բոլորը տեսնում և հետաքրքրուում են, աւելորդ խօսքեր ու սրախօսութիւններ են լսում, յետոյ հոհոց, յետոյ «պրի-

կաշչիկի» հայոցյանք։ Իսկ ամբարի ներսում ոչ մէկը դրանցից չըկայ, պահւած, «աբուոդ քեզ քաշած» աշխատում ես, պապականն թիւն էլ ձեռքիդ բռնած։ Միակ անյարմարութիւնը, որ Եղօն զգում էր, այն էր, որ ամեն սուլոցից յետոյ, երկար ժամանակ նա լւանում էր իր մարմինը տղմից ու մագութից։ իսկ այդ մի ամբողջ տանջանք էր. առաջ աւազով, կաւահողով, կրով արորում էր իր ոտները, սրունքները, ձեռներն ու թեերը, որպէսզի մարմինը ցամաքի հանքային իւղերից ու մագութից. յետոյ մոխրաշաղախ մարմինը լւանում էր հանքերի փոսերի ջրերով ու եռը միայն «կազարման» վերադառնում։ Եւ մինչև որ այդ բոլորը նա կատարում էր, ժամանակը անցնում էր, մութը կոխում էր գետինը, ուշանում էր ընկերներից, հացից ու ճաննդատից։

Խանութիր, ուր Եղօն ձերբակալւել էր, մազութի ամբարի դէմուղէմն էր. ճանապարհի մի կողքին խանութին էր, միւս կողքին՝ ամբարը։ Հարստութիւնն ու շռայլութիւնը քոյր ու եղբայր են. այդպէս էր նաև հանքում։

Բայց հանքի խանութին ուրիշ բան էր. հանքի ծնունդ էր նա, այդ պատճառով տիզմ, մազութ, սաժ, ամեն տեսակ կեղտոտութիւններ գնում ապականում, սկացնում էին նըան չորս կողմից, և կրկին նա մնում էր հանքում սիրելի, էական, անհրաժեշտառութիւն։ Նրա ուղղաձիգ շինութիւնը, սահմանի վրայ, բլրակի գլխից, բարձրանում էր գէպի երկինք խրոխտ, վեհ և հորիզոնը խափանուում էր ներքեցից ու փոսերի միջից նայողի առաջ. ասես՝ երկիրն այստեղ վերջանալիս լինէր, իսկ նրա շինութիւնը մի աշտարակի նման միացնում էր երկինքն

ու երկիրը, —այն անսպառ ոև մազութն ներքեռւմ  
և անսահմանն ու անհունը վերեռւմ:

Իրայդ բարձր գիրքից խանութը տիրապետում էր  
շրջապատին և իր վեց հատ հարաւ նայող լուսամուտ-  
ներով հպարտ-հպարտ դիտում էր դէպի ներքեւ ու  
արթուն, զգաստ հսկում էր գիշեր-ցերեկ հանքային  
հեռաւոր անկիւնների վրայ: Ցերեկը, երբ արել  
խանձում էր փոսերում տանջւող մշակներին, խա-  
նութի լուսամուտները բարձրից քմծիծաղ էին տա-  
լիս իրանց ողորկ պսպղուն ապակիների միջից դէպի  
ամբարն ու տիզմը. իսկ գիշերը՝ հեռու, անթափան-  
ցելի խաւարի ծոցից նայողին թւում էր, թէ այն  
վեց մեծ, պայծառ, վառ լուսամուտները վիշապի  
աչքեր լինէին, այն վիշապների նման, որոնց մասին  
հեքեաթներում պատմում են, թէ իրանց պողերով  
գիշերը լոյս են տալիս և աշխարհը լուսաւորում:

Եւ խանութին նայելիս, կողքի ամբարի մէջ աշ-  
խատող մշակի ճաշակը գրգուում էր, նախանձը  
շարժուում, երևակայութիւնը վառում:

—ՏԵս, Մկօ. մէկ սայլ լէ սառուց կի գայ, —ա-  
սում էր Եղօն, ձեռքով ճանապարհը ցոյց տալով:

—Մըզիկ ի՞նչ, Եղօ. սառն-սառն հնչում էր  
Մկօյի ձայնը. էն աղաների գինին կըպաղցունէ, է-  
նոնց համար ի:

—Էղքան սառուց դոր կերթայ, —զարմանում  
էր Եղօն:

—Դոր. կարագ, պիկա, միս, խիար, գինի—ես  
հիմ—ամեն էնոր մէջ կըպախեն:

—Մըզիկ էնորէն չեն ի՞ տայ, Մկօ, —հարցնում էր  
կարօտութեամբ Եղօն, —մեր ջուր ոնց խաշած, աղ-  
տոտ, նաւթոտ. էն սառուց զուր կանցնի, կըփանայ:

—Մըզիկ, —կըկնում էր Մկօն մի խորհրդաւոր  
շնչով, —մենք ի՞նչ ենք. աղայ ենք, փաշայ ենք, կա-  
ռավարիչ էնք. մենք արարօչի, մշակ ենք. մեզ սա-

ուրց ուսկից կըխասնի, մեր՝ մազութու ջուրն ի:  
—ինչ... ուր մեր պաղ-պաղ աղբըրրակներ, մեր  
լեռներ, մեր Հովոց. հայ վախ, հայ վախ. ենենք սա-  
տեղաց, երթանք մեր տուն, մեր վաթան, մեր հող...

Բայց Եղօյի ձայնը հալւում, սառչում, անցնում  
էր, արձագանք չէր տալիս: «Բիրդա, գիւղնան»—  
համշարիների աղաղակը որոտում էր այդ ժամանակ  
նրանց ականջի տակ. կարծես՝ իրականութիւնն ա-  
սելիս լինէր— հանքը մտքերի ու խոհերի տեղ չէ,  
աշխատել պէտք է. և Հովոցի տարագիրները ճանա-  
պարհից գարձնում էին իրանց հայեացքը, կրկին թիի  
ու բահի կոթից հբում-հրհրում, իրանց անհողի, մե-  
ռած գործին կպչում:

Դ.

Սկզբում, երբ Եղօն նոր էր եկել, հանքն ամեն  
կողմից տարօրինակ էր թւում նրան, և դեռ երկար  
ժամանակ նա պահում էր գիւղական կեանքի պարզ  
սովորութիւնները: Ի հարկէ, յետոյ-յետոյ նա էլ ըն-  
տելացաւ, հանքի մտրդ գարծաւ, բայց կային բա-  
ներ, որ նա փոխել չկարողացաւ և մնաց միննոյն  
Հովոցի Եղօն:

Շատ անգամ առաւօտը վազ Եղօն հանդիպում  
էր պրիկաշչիկին, կտուակարչին, վերակացւին և ա-  
մեն անգամ հեզ, խոնարհ շարժումներով երկտակ  
կուանում էր, ձախ ձեռքը տանում էր, կրծքի վրայ  
դնում, աջով մորթէ գդակը գլխից հանում և ակ-  
նածութեամբ «բարիլոյս» շնչում, բայց միշտ նրա  
ողջոյներն անպատճախն էին մնում. միայն շըր-  
ջապատի մշակ ու արհեստաւոր մարդիկ տեսնում  
էին այդ, Եղօյին էին նայում և քաղցը ու մեղմ  
ծիծաղում նրա միամտութեան վրա: Եղօն գրանից  
համ վիրաւորում էր, համ զարմանում զբա վրա:  
—Չըդիպաւ, որ ձիկ լէ շնորհք ընեն... էն Մար-

զիս «պրիկաշչի» ի՞նչ ի, էն լէ բարիլոյս չընդունի, երես կըշրջի, չըտեսայ գէին: Մարդ լէ բարիլումից փախուստ ընէ. էն սուրբ լոյս, էն արդար աստղ մնդ աւետիս ի. մեր խաւատ էնով կենդանի ի. մարդ արարած խետ մանուկ արևի նոր կեանք կառնու, Աստւած կըկանչի, բարի գործ ու համբաւ էնով կը յուսայ. համա էս աշխարհք էպահս չի:

— էպահս ի, Եղօ, հաբա—ասում էր Մկօն, — էն բարի լոյս երկիր մնաց ու անցաւ... էս աշխարհք ուրիշ ի: — Մըզիկ ի՞նչ բարի լոյս. արարօչի ու բարիլոյս. քո խաւասար էս աշխարհք ամբարնի, բան ի. խետ էնոնց պիտ զրցիս, խետ էնոնց ապրիս, խետ էնոնց մաշւիս, անցնիս. քո բարիլոյս-բարիգիշեր էնոնց խետ տ'եղնի. էլ վով կըխարցունէ քո տեղ, քո հալ—եա կաս, եա չկաս. էս բահ, էն գործիք, էն թել—քո վիճակ լէ էնպէս:

— Միշտ ծուռ կըզրցես,—ասում էր Եղօն, ներողամիտ հայեացք գցելով Մկօյի վրայ. մենք մարդ ենք, ամենք մարդ են, խօզէին, կառավարիչ, ես, դու, Սարգիս—մարդ ենք, Աստուծոյ պատկեր ենք...

— էս աշխարհք մարդ ու մարդ ուրիշ ի, — ընդու հատում էր նրան Մկօն, — կայ մարդ՝ մարդ ի, կայ մարդ՝ կէս մարդ ի, կայ մարդ՝ մարդ չի:

— էպահս բան չեղնի, Մկօ, — հակառակում էր նրան վշտացած Եղօն, — անսատածծութիւն ինչի կը զրցես. մարդ մէկ ի, խօսք մէկ ի, Աստւած մէկ ի. սէր պիտ պաշտենք, խաւատով ապեկնք, երկինք ազօթենք, երկիր հայցենք: Զար մարդ օրինակ չեղնի, փուռ երկիր խայրենիք չդառնայ. մըզիկ մեր խայրենիք, մեր խաւատ, մեր խոզի կայ. մեր երկիր մարդ մէկ ի, խօսք մէկ ի, Աստւած մէկ ի.

Բայց Մկօն չէր ուզում համոզւել. նա աշխարհքի մարդ էր. այդ բոլորը վաղ էր այզպէս. հիմա ժամանակը փուչ է, հիմա մարդ ու մարդ ուրիշ է.

«կայ մարդ՝ մարդ ի, կայ մարդ՝ կէս մարդ ի, կայ մարդ՝ մարդ չի»: Նա ուրիշ կերպ չէր համոզւում, բայց Եղօյին էլ համոզել չէր կարողանում: Ե.

Հովացը թողնելուց յետոյ՝ հանքում Եղօն շատ փոխւեց. հագուստն ու երեսի կերպարանքը, լեզուն ու տպաւորութիւնները, աշխարհածանօթութիւնն ու նիստուկացը—բոլորը փոխւեցին, օտար երկրի ազգեցութեան ենթարկւեցին: Միայն աստւածպաշտական զգացմունքն էր, որ մնաց նրա հոգու մէջ միշտ անարատ:

Նա սրբութեամբ պահում էր բովոր պասերը, մոմ էր կպցնում «կազարմայի» հացի սեղանին, երեսին խաչ էր հանում, «Մեղայ Աստուծոյ, Տէր ողորմեա, Փառք քեզ Աստւած» արտայայտութիւնները անպակաս էին նրա բերանից: Ով որ լսէր ու տեսնէր նրա այդ աստւածպաշտական խօսքերը, նրա երկիւղած շունչն ու հնչիւնը, մեղսամած հայեցքն ու դէմքի մանկական պարդ արտայայտութիւնը—հանքը կըմոռանար, մտքով կըսլանար մեր խուլ գիւղերն ու վանքերը, ուր ժամի պատի տակ կամ սեան առաջ ծնկաչոք ծերունիները, ճիշտ Եղօյի նման, ազօթք են մըմնջում, Աստւած կանչում:

Ճշմարիտ է՝ հանքային շրջանում հայ Եկեղեցի չկար, կազնիների հովերի տակ պահւած, կանաչով զարդարւած, հնութեան ու սրբութեան շնչով պարուրւած, բայց Եղօյի գեղուն, ինքնարուղի ազօթքն էլ տեղ չէր հարցնում: Ամեն իրիկուն, խորհրդաւոր մութով ծածկւած, կանգնում էր նա «կազարմայի» յաղթանդամ, վիթխարի պատի տակ և երկնքի սառն պնդուն աստղերի աչքի առաջ ժամ էր անում, խոնարհ, գլխիկոր, ճեռքերը կրծքին ամփոփած, ոտը ոտին կպցրած:

Խաւարի մէջ ոչինչ չէր երևում այն պահին, ոչ  
ձահիճ, ոչ վիշկաներ, ոչ սաժ ու մուլք. ինքը Եղօն  
էլ աննկատելի էր մնում ուրիշներից. ինքն էր, որ  
իրան գիտակցում էր: Բացառութիւն էր միայն նօր-  
դը, որ խաւարի անսահման թագաւորութեան մէջ  
էլ բոլոր ուժով պարում ու երգում էր և իր հուժ-  
ուու թերով յեղյեղում, տարութերում էր հազարա-  
ւոր ազտեղութիւնների մաղձն ու գարշը:

Աղօթքից յետոյ Եղօն նստում էր ընթրիքի. չոր  
հացը քացախի, սոխի ու սխտորի հետ ծամում-ծամ-  
ծըմում էր, փորը լցնում, վրայից մազութոտ ջուրը  
խորթ-խորթ կուլ տալիս, երեսին խաչ հանում ու  
պառկում չոր տախտակի վրայ, մեկնուում ամբողջ  
երկարութեամբ, մոռանում հանքն ու աշխարհքը,  
անուշ-անուշ քուն մտնում, յոզնած ու ջարդւած  
մարմին հանգստութիւն տալիս:

—Ինչ ես այդքան ամեն իրիկուն աղօթում, Եղօ,  
—հարցնում, խօսեցնում էին նրան մշակները:

—Ի՞նչ պիտի, —անհոգ, առանց վշտանալու պա-  
տասխանում էր Եղօն, —կաղօթեմ, որ Աստւած մեզի  
սաղ պախէ, կեանք երկարցունէ. մեր տուն անօրէնի  
ձեռք չտայ. մեզ ողջ առողջ մեր վաթան խասուցնէ:

—Իսկ մեր խօզէինների համար չես աղօթում,  
—մէջ էր ընկնում Մկօն:

—Կաղօթեմ, ինչի չեմ աղօթեր. Աստւած էնոնց  
բոլ ընէ, էնոնց ուղուրով լէ մըզի պախէ պախպանէ:

Բոլորը գիտէին, որ Եղօն ուրիշ պատասխան չի  
տալ, և վշտանում էին, որ իրանց միամիտ ընկեր  
հայրենակիցն աղօթում է ամենքի համար, նոյն-իսկ  
խօզէինի համար:

—Իսկ աղօթքդ լսում է երկինք, —խօսում էր  
Մկօն հակառակ-հակառակ:

—Ինչի չի լսէ. հարա չի լսէ. աղօթք խաւա-

տով սիրով կրլսէ երկինք. աղօթք խաւատով չանցնի  
զուր, էն կրկատարի...

—Աղօթեցինք, շատ աղօթեցինք, Եղօ, բայց բան  
մէլ չեղաւ, —ընդհատում էր Մկօն՝ արդէն կէս յու-  
սախաբ մարդու նման, —ուխտերից յետ չըմնացինք.  
Ժամ պատարագից չուշացանք, մատաղ—սրբութիւն  
հաւատով յուսով կատարեցինք. մենք էլ, մեր պա-  
պեր էլ, մեր պապու պապեր էլ ժամեր շինեցինք,  
կամուրջներ կառուցինք, վանքեր պայծառացուցինք,  
գիր սիրեցինք, աւետարան ու սէր քարոզեցինք...  
Վերջը... էլմը զէն կիկօն, էլմը զէն կիկօն, —ան-  
տուն, անտէր, անգլուխ, անպաշտպան, երկինք օ-  
տար, երկիր անհաւատ, խօզէիններ անգութ. այ թէ  
ուր հասանք, ուր մթնաւ մեր արև:

Բոլոր մշակները Մկօյի կողմն էին անցնում. նա  
եղածն էր ասում, կեանքից էր խօսում, աշխարհքի  
ու հոփոցի յարաբերութիւնը պատմում. միայն Ե-  
ղօն չէր համաձայնում, մնում էր իր ասածին:

—Դա խաւատ ի, Մկօ. դա խաւատ չի, —ասում  
էր նա հանգիստ, անվրդով չնչով. —խաւատ սրտի մէջ  
ի. էն անվերջ ի. էն ոչ սպանւի, ոչ մաշւի. էն ան-  
սպառ ի. խաւատով սիրտ անյուսահատ ի. էն սիրտ  
չպարտի, էն խոզի միշտ բանձր ի: Ես կը խաւա-  
տամ Աստուծու մեծութեան, էնոր խորհրդին, արար-  
չութեան. կաղօթեմ նեղ օրին, իմ սիրտ կը թեթև-  
նայ, իմ ցաւ կը փարատի, աշխարհ սիրելի կը դառ-  
նայ, մարդ՝ ընկեր-բարեկամ. այ, խաւատ որն ի. էն  
մեծ ի՝ թէ ունիս. մարդ առանց էնոր՝ ոնց քար. էն  
համ ընկեր ի, համ միխիթարիչ, համ օգնական: Մեր  
պապեր էդ խաւատով ապրան ու մեռան, էնոնց որ-  
դիք լէ էնպէս:

—Էն վաղ էր, Եղօ, —հակառակում էր կրկին  
Մկօն, —էն վախտ ուր, հիմի ուր. տես, տուն տեղ  
ձգած ես, դու, Ծատուր, կիկօ օտար երկիր կը տանջ-

վինք, զուլ նօքար կեղնինք այլոց. Հովոցն ուր՝ Բայ-  
լախանին ուր. մենք ու մագութ, Եղօ ունալթի ամ-  
բար: Կաթ կուտէինք մեր տուն, մագութ կը խմենք  
սա տեղ. ընկանք ու կը քաշենք, վրդ կը խոնարհե-  
ցունենք: Վաղ լէ ընկնինք մեռնինք, ափ տանեն էլի  
մէջ թաղեն. ոչ քար, ոչ տեղ, ոչ նշան ափ չեղնի. Եր-  
կինք օտար, Երկիր անհարապատ, անարցունք—ջընջ-  
ւինք ու անցնինք: Է՛, քո աղօթք կը փրկէ մեղի, կը  
տանէ մեղի մեր վաթան, մեր օջախ: Զի տանի, Եղօ,  
չի տանի: Ամբարիշտ խօզէին՝ աղօթք. անտառած  
պրիկաշչէն՝ հաւատ: Աղօթք մեղի ճար չի անի. թէ  
ոսկի ունիս, թէ՝ հող, այգի, թէ ինքդ քո գլխի տէրն  
իս՝ էն վախտ աղօթք զօրութիւն ունի, էն վախտ մալ  
ու օջախ, հաց ու աբուռ օրնեալ ի. ճիմկու աղօթքն  
ինչ ի, ոչինչ. չեղած բան մը, էն կար ու չկայ, ու-  
նէինք ու չունինք, կայինք ու չկանք—էղպէս ի:

— Հայ վախ, Մկօ, հայ վախ, ախպէր.—հառա-  
չում, սրանեղում էր Եղօն,—աշխարհք փուճ ի, աղա-  
ներ փուճ ին, մեր աէր, մեր տիրական փուճ ին, Մկօն  
կըսէ՝ ես լէ փուճ էղնիմ: Կընան այլոց պէս ոտքդ  
պարզես, մեր խօզէինսերի ընկեր դառնաս, էս Եր-  
կիր մեծը, մեր գլխի հրամայող էղնիս. չէ, չես ի  
կրնայ: Հովոցի Մկօ—մեր խօզէին, մեր տէր, մեր  
իշխող—վով կըխաւտայ: Մկօն արարօշի, Մկօն մշակ  
ու նօքար, մէկ լէ Մկօն—թագաւոր: Էնոնք խորթ ին  
մեղի, մերը աղօթքն ի. հա պիտ աղօթէնք, հա պիտ  
աղօթէնք: Աշխարհքում ոսկի շատ, մալ գովլաթ  
շատ, հանգիստ ապրուստ շատ—իսկի մեղի կի տան.  
իսկ խաւատ՝ էն մերն ի, էն յաւիտենական մերն ի:  
էն Աստուծոյ պատկերն ի մեր հոգու մէջ. էնով մենք  
խաւատար ախպէր ենք: էն ու քո սիրոտ համ ոսկի  
ի, համ բարեկամ, համ ամեն բան: էն ի պէտք մեզ.  
էնով մարդ ենք մենք, էնով աստածութիւն կայ, Երկինք՝ հաստատ, բարձր, Երկիր անշարժ, հնապանդ,

էն ի մեր կեանք ու մեր մահ, մեր տանջանք ու  
փրկութիւն. խաւատ էնէնց ի:

Մշակները խմբում էին Եղօյի ու Մկօյի գլխին,  
որսում էին վիճողների շարժումները, շեշտերը. հա-  
ւանութիւն էին տալիս մերթ մէկին, մերթ միւսին  
և վէճը ընդարձակում, հասարակաց էր դառնում.  
բայց վճիռը ոչ ոք չէր տալիս. իսկ գիշերը սահում  
էր, քնի ու հանգստի ժամն անցնում.

Այդպիսի ըոպէին Կիկօն հեռու մի անկիւնի ցըն-  
ցոտիների տակից գլուխը դուրս էր հանում, վիզը  
բարակ Երկար դուրս էր զցում, լապտերի աղօտ լոյ-  
սից մոայլած, մտքերից ու խոհերից սրտմտած սահ-  
ում էր տղաներին իր մաշւած ձայնով:  
— Բաւ ի ձեզ. Ելէք քուն մտէք. էդ ծուռ վիզ  
գերեզման կըշտկի:

Բայց կըկին տեղից շարժեող չէր լինում և Մկօն  
մի վերջին փորձ էր անում Եղօյին կոտրելու:

— Բարի, Եղօ. բարեպաշտութիւն, ասենք, պէտք  
ի, զօրաւոր ի, գուն լէ բարեպաշտ, աղօթքի, ժամ—  
պատարագի սիրահար: Որ քեզի չեն թորկէ բարե-  
պաշտ մնաս. որ քեզի կը լիկեն, քո կեանք, քո խաւատ,  
քո սիրտ կը խառնեն, քո ժամ կանարգեն ու կըկո-  
ղոպտեն—քո բարեպաշտութիւն կըփրկէ քեզի, էնոր  
օգուտ նւր ի:

— Էնոնք ուրանց համար, ես լէ ինձի համար.  
Էնոնց մեղի ուրանց շինք, իմ մեղի՝ իմ: Ես խա-  
ւատով կամ, էն ի իմ պարծանք: Էնոնց տեղ պա-  
տամխան ես չեմ ի տայ:

Ասում էր Եղօն և նրա ձայնի ինքնուրոյն ան-  
պարտելի արժանաւորութիւնը ազդում էր մշակների  
սրտին:

Վէճը դադարում էր. բոլորը ցըւում էին իրանց  
տեղերը հանւելու, հանգստանալու. արդէն ուշ գի-  
շեր էր: Բայց դեռ Երկար ժամանակ քունը նրանց

աշքին չեր գալիս: Ճշմարիտ է, Մկօյի դրական պատասխանը նրանց համոզում էր, բայց Եղօյի Փանատիկ, ոգևորւած, «ի խրոց սրտի» զգացմունքներն ու մտքերը հմայում, դիւթում էին նրանց և աշքերը կէս խուփ՝ երկար-երկար դեռ մտմտում էին նրանք իրանց տեսածն ու լսածները, մինչև որ բնական պահանջից նսեմանում էր նրանց գիտակցութիւնը և աղօտ լոյսի տակ բոլորը թաղւում էին խոր քնի մէջ:

Այսուհետեւ «կազարմայի» մէջ կենդանութիւնն անցնում, հանգչում էր. մի անվրդով ոչնչութիւնով լցւում էր չորս պատերի մէջ, և այդ սովորական ոչնչութեան մէջ Եղօյի քարոզներն ու մտքերը թրւում էին մի երազ, մի տեսիլ կամ մի վայրկենական լուսաւոր գիծ, որ երկնքի անհաս անհունութեան մէջ ծագում է ինքնաբերաբար, փայլում է խաւարի մի փոքրիկ խորշում և կրկին անհետանում:

Զ.

Մի կիրակի օր էր, երբ Եղօյին ձերբակալեցին: Նա գործից ուշ էր տուն դարձել. մինչև որ լւացւեց, ու սրբւեց, մինչև որ աղօթքի ու սրբութեան ժամն արեց, արևմուտքն աննկատելի կերպով մթազնեց. Բալախանու ծուխն ու սաժը ծածկեց երկնքի երեսը և սովորականի նման շողու վիժմունքները հանքում քուլայ-քուլայ տարուբերւում էին. ասես՝ բարձրանալ, սուզւել էին կամենում նրանք դէպի բարձր, դէպի անսահման ազատ տարածութիւններ, բայց այդ նրանց չեր յաջողւում. արբած մարդու նման նրանք երերւում էին—մէկ՝ բռւրգի լանջին թեքւում, մերժ նասոսատան պատերին, և յետոյ սառչում, ջուր կտրում, և տախտակներն ու խողովակները կաթիւ-կաթիւ արցունքով ողողում:

Այդ աղջամղջին «պրիկաշչիկը» Եղօյին հրամայեց տաք ջուր բարձրացնել նրա բնակարանը. և

մինչև որ Եղօն այն ջուրը հաւաքեց հանքի խողովակներից, աղջամուղին էլ անցաւ և համատարած խաւարը բոնեց երկնքի ու երկրի երեսը. ճանապարհը, ճահիճները, վիշպանները, շոգին և նրա կաթիւ կաթիւ արցունքները՝ բոլորը կորան մարդու աշքից և մութ, անթափանցելի խաւարի մէջ չքացան: Նօրդն էր միայն, որ բարձրացաւ իր հեռու անյայտ ծածկւած բնակարանից, սլացաւ Ապշերօնեան թերակղզու ու երեսից և գնաց Կասպեան ջրերի մէջ լողանալու, մաքրւելու ներշնչած աղտեղութիւններից:

Այդպիսի ուշ ժամին Եղօն «կազարման» մտաւ: Արդէն բոլոր մշակները ընթրիքը կերել-պրծել էին և հանգստանում էին, որը կողքի վրայ՝ լաստովը մէկ ձգւած՝ աչքը կթել էր մի կէտի և խոհերի անձնատուր եղել. որը թիկն տւած իր գլխատակի ցընցոտիներին ննջում էր. որն էլ մի նամակ ձեռքին բոնած՝ պատի տակ մեխւել, ուշազրութիւնը հաւաքել, ճիգ էր անում կարդալու, բայց աղօտ լոյսը նրան չէր օգնում. նա կանգնում էր ոտքի ծայրին, նամակը բարձրացնում էր վեր դէպի կամթեղը, կոպերը լայն բացած փորձում էր որսալ աւելի շատ ճառագայթներ, բայց դարձեալ չէր կարողանում նամակը կարդալ:

Այս կուշտ բազմութիւնը տեսաւ Եղօն և նրա ճաշակը աւելի գրգռւեց. մի չը պատահած ագահութեամբ, մի սովալուկ ախորժակով նրա մէջ ուտելու ցանկութիւն ծնաւ. բոլոր ուտող գործարանները գլուխ էին բարձրացրել, լեզու էին առել, ծամել, կուլ տալ ու շարժողութեան մէջ մտնել էին կամենում: Այդ ցանկութեամբ Եղօն յափշտակւել էր:

Նա խանութի ապահկների տետրակը դուրս քաշեց իր ցնցոտիների միջից և շուտով «կազարմայի» կիսախտար շէմքում չքացաւ:

—Երթամ խանութ, տեսնեմ ինչ կայ, —մտմը-  
տում էր նա ինքն իրան:

Սովորաբար Եղօյի ուտելիքն էր սոխ, սխտոր,  
քացախ, գետնախնձոր և լոբի. կիրակին ու շաբա-  
թամէջը այլպէս էր անցնում նրա համար: Շատ  
ժամանակ էլ ցամաք հացով էր եօլա զնում: ծա-  
մում - ծամծամում էր երկար-բարակ, մինչև որ  
ծնօտի ուկրները յոդնում դադարում էին, ու քուն-  
քերի մկանունքները ճակատի երկու անկիւններում  
հաստանում, տոգում, ծանրանում էին. նա զգում  
էր, որ նրանք ուռչում փշում են, բայց ինքն իր  
վրայ ոյժ էր գործ զնում, ծամում էր մինչև կշտա-  
նալը, մի կերպ փորը լցնում էր, լաւ-վատ հացն  
աւարտում. յետոյ աղտոտ ջուրը խորթ-խորթ վրա-  
յից կուլ էր տալիս, երեսին խաչ հանում ու պառ-  
կում քնում:

Բայց այսօր այդ հանգիստ վիճակը փախել էր  
նրանից, արիւնն անսովոր էր այժմ խփում նրա  
երակների մէջ և քրտինքը ծանրացրել էր արդէն նրա  
մարմինը. խանութի մօտ մորթէ գրակը նա հանեց  
իր զիլից և երկու տակ ձեռքի մեջ բռնած՝ ճակատի  
քրտինքը սբբեց նրանով:

Խանութի դուան ճակատին էլքարական լոյսից  
վառւում էր ոսկեզօծ ցուցանակը. կարապավիզ լապ-  
տերը պատի ամենավերին շրթունքից, յորդ աղբիւրի  
նման, դէպի ներքե լոյս էր սփուռում առատութեամբ  
և խաւարի մէջ խանութի մուտքը դառնում էր հրա-  
պուրիչ և գեղեցիկ: Այդ լոյսը պարուրեց նաև Եղօ-  
յին և նրա սրածայր, համարեա անմազ զլուխը պրո-  
պղաց մի ըսպէ. մի հեգութիւն, աւելորդ գւարճու-  
թիւն էր այդ. մեղմ, թանձր, կաթնազոյն լոյսը  
փաղաքում էր Եղօյի կունդ զլուխը, իսկ նրա սիրտն  
ու հօգին, ներքին տրամադրութիւնն ու կարիքը  
այդ հարցնող անգամ չկար:

Եղօն բնականից տգեղ կերպարանք ունէր և  
խաւարի մէջ այդ կերպարանքը միշտ կրմնար ան-  
հետաքրքրական, եթէ չարախինդ լապտերը չըլինէր:  
Կարճ ու հաստ քիթը ներքեռում աջ կողմն էր թեք-  
ւած, որից քմծիծաղ էր արտայայտում նրա գէմ-  
քը. իսկ լրջութիւն էին արտայայտում այն երկու  
ակօսները, որոնք մանգաղածե, քթի երկու թերից  
սկսած, իջնում էին գէպի ներքե մինչև շրթունք-  
ների ծայրերը: Կծկւած, կնճռուտած, առանց այդ էլ  
նրա ճակատը համարեա անհետացել էր և նրա թա-  
ւուտ յօնքերն ու զլիսի մազերը իրար էին խառնւել:  
Կզակը, թիակի նման տափակ և սուր, կպած էր լայն,  
մեծ բերանին, իսկ բեխերը վերևից ներքե դիք-դիք  
կախւած էին մի-մի մեծ ստորակէտի ձևով: Ականջի  
եզրերը կտրտւած էին. վիրակապի տեղերը, բուժւե-  
լուց յետոյ, նշմարելի էին սպիտակ գծերով և կարծես  
դիտմամբ՝ աւելի այլանդակելու համար նրան, այդ  
փոքրիկ ականջները յետ ծալւած՝ զլիսի ուկրներին  
էին կպած. ընդհակառակ՝ ծնօտի ուկրների լծորդ-  
ները ականջների ներքեռում լայն ու հաստ դուրս  
էին ցցւած երկու կողմից աննպատակ կերպով:

Խանութը մտնելու ժամանակ Եղօն ծածկեց իր  
գլուխը, բայց լապտերի լոյսն արդէն ցոյց էր տւել  
այդ տգեղութիւնն իր բոլոր մանրամասնութիւննե-  
րով, իսկ «պրիկաշչիկը» ներսից նկատելով շէմքում  
Եղօին՝ արհամարհանքն ու ծիծաղը շրբաշւեց նրան  
զգալ տալ:

Նա պրիկաշչիկին յատուկ դիրք ընդունեց, մէջ-  
քից խոնարհած՝ մօտեցաւ Եղօյին և ցանկութիւն  
յայտնեց ծառայել նրան: Եղօն այդ ծամածութեան  
ուշք չըդարձրեց: Խանութի խորքում մի սեղան կար,  
որի վրա դարսւած էին կարագ, մեղր, պալուխոները,  
ձկնեղին. ապակէ ծածկոցների տակ պահւած էին  
վայրի թոշունների միտ, խավիար և այլն: շուրջը

գեղարւեստօրէն շարւած էին կոնեակների և գինիների շիշեր, որոնց գոյնզգոյն և զանազանատեսակ պատկերը միայն աչքի զբոսանք էին բերում: Ի՞նչ էր որոնում Եղօն այդ բոլորին նայելով—դժւար է ասել. բայց նայում էր ուշադրութեամբ, դիտում էր անվըրդով և հանգիստ, առանց դէմքի վրա արտայայտելու իր հոգեկան ծանր վիճակը:

—Ի՞նչ ես ուզում, Եղօ,—որոտաց երրորդ անգամ պրիկաշիկի ձայնը իշխանական շեշտով:

—Եղօն. Եղօն հարբած է. Եղօն ի՞նչ պիտի ուզէ, —պատասխանեց երկրորդ պրիկաշիկը, դրամարկղի ետեից դուրս գալով վանդակի առաջ:

—Հարբած դու ես. ես հարբած եմ. ի՞նչի՞ կը խօսաս գուր, —ասաց Եղօն:

Պրիկաշիկներին էլ այդ էր պէտք. Եղօյի հերքումը նրանց զւարձացընեց:

—Ի՞նչ կայ որ, այսօր տօն է, եթէ հարբած էլ լինիս, ամօթ չէ, —ասաց առաջին պրիկաշիկը և Եղօի վրա նրանք երկուսով սկսեցին ծիծաղել ու ծամածութիւններ անել.

—Հերիք քփուտաք: Ե՛լ, ինձի մէկ զրւանքայ ճրագու տուր, —խօսեց վերջապէս Եղօն, հաշւի տետրակը զնելով պրիկաշիկի առաջ:

—Վայ Եղօ, Է՞դ է ուզածդ... Բաս որ չունենանք: Զկայ, Եղօ, Աստւած վկայ, չկայ:

—Տօ, ինչի սուտ կրխօսաս. նայէ, յետոյ ասա, Է: Այս կէս խրատական, կէս յանդիմանական խօսքերը մի քիչ լրջութիւն բերին պրիկաշիկների վրա:

—Եղօ, Աստւած վկայ, չըկայ. կար՝ տարան. ուշացել ես. ասաց նրանցից առաջինը:

Այդ ժամանակ Եղօն մի համարձակ քայլ արեց, ձեռքը մեկնեց վանդակապատի դոնից ներս և ցոյց տալով մսի կողքին կախ ահապին մեծ զունդը, ասաց.

—Էսիկ ճրագու չի, հապա ի՞նչ ի. Ի՞նչի՞ կըսես չկայ. կուզես խարբու ինձ:

—Այդ չեմ տայ, միսս խարաբ կըլինի, —ասաց պրիկաշիկը մի հաստատ ժխտումով, —թէ կուզես՝ այս տար:

Յետոյ արհամարհանքով յատակից առնելով մի ոսկը գունդ՝ Եղօին մեկնեց, քմծիծաղ տալով. իբր թէ Եղօն շատ բարձրից էր պահանջում:

Եղօն ցնցող հարւածով դէն շպրտեց ոսկը և ըստ երևոյթին վրդովւած՝ մի քայլ առաջ գնաց վանդակի մէջ, մօտեցաւ կախոցին, ձեռքն առաւ դեղին ճարպը և, շարժելով ձեռքի մէջ, ասաց.

—Ես էս կուզեմ, այ, ես էս կուզեմ:

Եղօի աշքերը փայլատակում էին այդ ըոպէին, իսկ ձեռքը դողդողում էր:

—Կոօ, —գոռաց պրիկաշիկը, հրելով Եղօյի կուրծքից, —՞ւր ես մտնում. խօսք ունիս, այնտեղից ամա. Քեզ ասում են չկայ, պրծաւ գնաց:

—Ճօ, էսպէս լէ անաստւած. տօ, հարա էն ճարպ չի. կըսես չկայ. հարա էն ի՞նչ ի, մի՞ս ի...

Եղօն, համբերութիւնը կտրած մարդու նման, վիշտ ու կատաղութիւն էր արտայայտում իր ձայնով. նա իր խօսքերը զեռ չէր աւարտել, երբ շէմքում պատկերացաւ կառավարիչն իր ամբողջ հասկով:

—Ի՞նչ աղմուկ է այս, —հարցրեց նա, սպառնական հայեացք գցելով իր շուրջը:

—Եղօն է, —պատասխանեց պրիկաշիկը:

—Աղա...

Եղօն փորձեց խօսել, բայց կառավարիչը չըթողեց:

—Չայնդ կտրէր... Չեղ ասւած է աւելորդ խօսակցութիւն չանէք: Ի՞նչ է ուզում:

—Ճարպ է ուզում. ասում եմ չըկայ, ասում է մսի վրայից կտրիր տուր:

Մի ըռպէտւմ կառավարիչը կրակ կտրեց. լսել անզամ չէր կարող, որ մի մշակ պահանջ կարող է անել. այդ մի այնպիսի յանցանք էր հանքում, որ առաջն առնելու համար կառավարիչն ամեն բան կանէր՝ ձեռքով, լեզով, փողով, միայն թէ հնազանդութիւն պահւէր. ուրիշ կերպ անհնար էր հանքում:

—Մսի... վրայից ես... պահանջում. գրա համար ես հաջոց բարձրացրել:

—Աղա... ուզեց եղօն խօսել, բայց չըկարողացաւ:  
—Էլ ի՞նչ աղա. կորիր, աչքիցս հեռացիր. կուարար շուն շան որդի: Էլ դրան հաց չըտաք խանութից:  
Կառավարիչը չար կնոջ հնչուն ձայն ունէր, որի մէջ համ ոյժ կար, համ սպառնալիք. այդ բոլորին խառնւած էր այժմ նաև մի թշնամանք պահանջ արտայայտող եղօի գլխին:

Եղօն մի տեսակ չէզոք գրութեան մէջ ընկաւ սկզբում. յետոյ զսպեց ինքն իրան և մի մեղսամած մարդու կերպարանքով սկսեց քայլել դէպի դուռը: Բայց հէնց պիտի շէմքում անհետանար նրա թիկունքը, երբ քթի տակին թոնթորաց նա.

—Միսը, կըսէ, խարար կեղնի, համա էն ճարպի. մսից զատ կըծախին:

—Դնւրս, դնւրս, դնւրս, յանդուգն, աներես,—որոտաց կառավարչի ձայնը խանութի միջից դէպի դուրս,—դուրս արէք դրան այստեղից. էգուց եկ, հաշիւդ առ. համարձակ, աներես... էղպէս էք, որ թուրքերը ձեզ կոտորում են...

Եղօն ցնցւեց. մի ակնթարթում գոյնը թուաւ, իսկ ոտքերը թուլացան. գլուխն ուղիղ տնկած, մէջքը ցցած, դողգոջ մարմնով յետ շրջւեց նա, մի ոստիւն արեց ու յարձակւեց.

—Թուրքի դինն էր քո դինն էր, անզամ, շուն... թուրքը քեզմէ լաւ է, —ճշաց նա և հարւածներ իջեցրեց:

Եղօն կարճահասակ մարդ էր. արդեօք այդ էր պատճառը, թէ այն, որ նա իրարանցման ժամանակ շտապեց, նրա հարւածները մի քայլ հեռւից իջան և նրա բուռնցքը փոխանակ կառավարչի բերանին՝ իջնում էր նրա կրծքին: Կառավարիչը յետ էր քաշւել արդէն, բայց այդ չօգնեց. ինժեներ և մշակ իրար գիրկ էին մտել:

Եղօն պինդ գրկել էր կառավարչի մէջքը և սեղմում էր, իսկ գլխով նրա կուրծքը հուպ էր տալիս դէպի յետ:

Այդ բոլորը մի քանի վայրկեան միայն տևեց. պրիկաշիկները վրա հասան, բռնցին Եղօի ձեռքը և հարւածելով յետ քաշեցին: Յետոյ կառավարիչը մօտ եկաւ, քաշեց, պինդ ապտակեց Եղօին, թքեց և խեղդւող հաւի նման սկսեց ճղճղալ. «կարա՞յ, վազմիտէ եւո վլապալիցիու»: Նա էլ Եղօի նման գոյնը ցցել էր և ամբողջ մարմնով դողդողում էր:

Ահա այդ ժամանակ էր, երբ մօտակայ «կազարման» թափւեց խանութի առաջ. մշակները տեսան Եղօին կալանաւորւած, լսեցին կառավարչի ճղճղոցը, Եղօի համարձակ պատասխանը «թող տանեն, ես յանցաւոր չեմ, թող տանեն, ես մեղք չունիմ», բայց նըրանք ոչինչ չըհասկացան: Ապուշ կտրածի նման, նրանք մոլոր հայեացքով մերթ կառավարչին, մերթ պրիկաշիկներին, մերթ Եղօին էին նայում, նրանց դէմքն ու շարժումները տնտղում էին երկար, բայց որևէ բան հասկանալ անհնար էր և նրանք սառել, հմայւել, արձան էին կտրւել, իրանց տեսածին ու լուսածին հաւատալ չէին կարողանում:

Ե.

Բալախանու նեղ ու տղմոս փողոցների մէջ, Եղօն շուտիկանների մէջ արած, երկար քաշ եկաւ: Ծուռ ու մուռ անցքերով էին նրանք դնում.

շուրջ՝ մութ, անծանօթ, սառն. երկինք՝ անկարեկից, երկիր՝ անզգայ, ոստիկաններն՝ անհաղորդ: Երբեմն-երբեմն նրանց հանդիպում էին ուրւականներ, սև, թեթևաթոիչ, որոնք խաւարի մէջ իսկոյն չքանում էին:

Նրանք երբ տեղ հասան, բոլորը քնած էին, ոչ ոք չիմացաւ. միայն գամփո շունը գլուխը բարձրացրեց և իր երկու ոտների արանքից մի երկու հաջոցով ողջունեց նրանց տարածամ գալուստը:

Ոստիկանները ձեռքով նշան արին, և Եղօն հնագանդ մտաւ նկուղը: Հէնց շէմքի մօտ, խոնաւ գետնին նրա ոտքերը ծալւեցին և մթան մէջ կծկւած, դէմքը ձեռքերի մէջ առած, նա սկսեց հեկեկալ, ինչպէս մի երեխայ: Կսկիծ, լլկումն, անարգանք, խայտառակութիւն—բոլորը գլուխ էին բարձրացրել, փոթորկում էին նրա ներսում, և երկար-երկար նա հեծկլում էր, բայց ցասումը չէր նստում: Յանկարծ նրան թւաց, թէ դրսից մի շշուկ հասաւ իր ականջին. նա իսկոյն ոտքի ելաւ, նայեց այն կողմը, շունչն ու հեծկլուցը իր կրծքի մէջ խեղեց, ականջ դրեց, սպասեց—բայց՝ բոլորը իզուր, ոչինչ չըկար, թւացել էր այնպէս: Զգաց միայն դրսի ու ներսի միաձոյլ խաւարը, ուր նօրդն անսահման թագաւորումէր իր զգզոցով և հարւածներով:

Միայնութեան զգացմունքն Եղօին պաշարեց և նրա մէջ ծագեց մի անզուսպ փափագ աղօթելու, վերանալու... նա չոքեց խոնաւ գետնին, ձեռքերը խաչեց կրծքին և անթափանցելի խաւարի ծոցում ինքն իր մէջ աղօթեց. «Արի Աստւած... լեր ապաւն» երգեց, «ի խորոց սրտէ» պաղատեց ու մտմտաց, մինչ արցունքի կայլակները թրջում էին նրա կոշտացած երեսի կտշին:

Աղօթքից յետոյ նա հանգստութիւն զգաց. սիրտը մաքրւեց, թեթևացաւ, խաղաղութիւն եկաւ վրան:

Նա փուեց նկուղի մերկ յատակին, ձեռքերը տարածեց աջ ու ձախ, գրկախառնեց մայր երկիրը, ինչպէս իւր հայրենիքում, դաշտի մէջ աշխատութիւնից յետոյ:

Եւ իր քաղցր քնի մէջ նա այլևս չէր գիտակցում զրաի աշխարհքը, ուր նօրդն ուժեղ-ուժեղ հարւածում էր երկաթ ու տախտակ և քանի գնումն այնքան աւելի և աւելի անզուսպ դառնում, կամայականութիւններով աշխարհքը լցնում: Չէր զգում նաև այն ժխորը, որ նըկուղի մէջ բարձրացրել էին մկները. նրանք սկզբում պատի այս ու այն ծակից միայն գիտում էին Եղօին և նրա շարժումները. բայց երբ Եղօն քուն մտաւ, նրանք դուրս պրծան իրանց ծակերից, մօտեցան նկուղի մէջ տարածւած տիտանին, հոտոտեցին, աջ ու ձախ արին և կրկին մտամոլոր յետ-յետ իրանց ծակերը մտան. նրանցից ամենաճարպիկը ցատկելով մօտեցաւ, մի քընքոյշ շոյումն արեց տիտանի ոտքին իր թաթով, բայց փախուստի ժամանակ քարին դէմ առաւ պատի մօտ ու վնասեց իր փոքրիկ գլուխը. քնի մէջ մի չըտեսնը լուստումն ընկաւ. բոլորը վրդովւած անհանգստացած էին, բոլորը կարծում էին, թէ Եղօն է մկան հարւածել, թէ նա արթուն է, թէ նա որս է անում, քնած չէ. և ամենքը ահարեկւած կուչ էին եկել իրանց ծակերի բերանին,—մինչդեռ Հովոցի Եղօն իր անուշ տիտանեան քնի մէջ խոմփում էր միայն, անհաղորդ իր շուրջը կատարւող ամեն իրողութեան:

Ը.

Կէս ժամ արկածից անց, խանութը և նրա շրջապատը խաղաղւել, հանգստացել էին: Եղօին ոստիկանատուն տանելուց յետոյ, մշակները կառավարչի հրամանով և զիշերապահների միջոցով ցրւեցին իրանց

տեղերը. պրիկաշչիկներն իրանց գործին կանգնեցին և կառավարիչը սկսեց ստուգել օրւայ հաշիւր. խանութի լուսամուտներից մէկի ետևում, կանաչ մահուդով ծածկւած սեղանի առաջ, նա փառաւոր կերպով բազմել էր սովորականի նման և համարիչի վրայ հաշիւներ էր տեսնում հանգիստ անվրդով:

Խաղաղել էր նաև «կազարման» իր չորս պատերի մէջ: Վրդովւած մշակները, որոնք այնքան յուզել էին՝ լսելով ու տեսնելով Եղօի ձերբակալւելը, կամաց-կամաց շունչները իրանց հաւաքեցին, հանգստացան. «Վատ բան էր արել կառավարիչ աղան, բայց մեծ մարդ է. արել է՝ թող լինի, տէրը իր հետ». այս զգացմունքներով պաշարւած՝ նրանց վրա հոգեկան անդորրութիւն իջաւ և քունը իր փրկարար մոռացութեան մէջ բոլորին խաղաղացրեց: «Կազարմայի» խրոխտ պատերի մէջ էլ հսազանդութիւնն ու հպատակութիւնը կրկին յետ եկան ու թագաւորեցին:

Մկօն միայն արթուն մնաց. քունը նրան մօտ չեկաւ ամբողջ զիշերը: Կրակին դրած շամփուրի նման, նա անդադար շրջարջում էր մի կողքից միւսը և նրա տակին խշշում էր չոր խսիրի մի փոքրիկ կտորը: Մկօի ներսում կրակ էր վառւում: Նա աշխատում էր քնել, մոռանալ իրան, անզգայանալ, ինչպէս իր կողքի Շատուրը, կիկօն, բայց չէր կարողանում, ներսի կրակը չէր թողնում:

— Տեղն ի Եղօին, մտմտում էր նա ամբողջ ժամանակ. թող հիմկու էլ աղօթէ Արարչին. թող հիմկու էլ զթութիւն հայցէ խոզէինների համար: «Միսս խարաբ կեղնի», այ քո կարեկցութիւն, Եղօ. խելքի եկ, աշխարհք ճանաչիր: Քո քաղցը չէ խնդիր, քո վաստակը չէ խնդիր. Հովոցի Եղօն, դու, չես խնդիր. չէ, Եղօ, խնդիր խօզէինի միան ի, էնոր ճարպն ի. այդ է պէտքը: Տար, ոսկը ծամիր. գնա,

թող քաղցը քեզի տանջէ, փորդ թող մէջքիդ դէմ առնէ, արիւնդ ցամաքի. հոգ չէ, օդ կայ՝ կրնաս ծծել. քահանայ, գերեզմաց կայ, ու չեղնին էլ է-նոնք—բան մը չէ, մայր երկիր կընդունէ քո մարմին, օդի մէջ չես մնայ,—միայն՝ խօզէինի միս խարք չեղնի, էնոր ճարպ չըպակսի:

«Կազարմայի» ազգաբնակութիւնը պատերի տակ քառակուսի գծի վրայ խոմփում էր Մկօի շուրջը, իսկ երկար հացի սեղանը, շինութեան ամբողջ երկարութեամբ, թափուր էր մնացել: Մկօն իջաւ իր լսատից և ընկաւ սեղանի առաջ նստարանի վրա. Նրա ծանրացած գուլսը խոնարհւեց ներքեւ՝ անքուն, մտահոգ: Նա դէմքը երկու ափի մէջ առաւ և սրտնեղութիւնից սկսեց հեկեկալ. յետոյ աշքերը սրբեց իր շապկի թևով, և սիրտը յետ եկաւ:

Նրա շուրջը բազմութիւնը հանգստանում էր և խառնաշփոթ խոմփում. ասես՝ ներքին յոգնածութիւնը, վիշտը, ցասումն այն խոմփոցի հետ գուրս էր արձակում բազմութիւնը և «կազարմայի» պատերի մէջ ցնդում էին հանքում ստացած նեղութիւնները, որպէսզի կրկին ստանան, կրկին դուրս արձակեն, միշտ, ամեն օր, ամեն շաբաթ, ամեն ամիս, մինչև որ կրասնէր իրանց և բոլորի վերջը և այդ վերջը փրկութիւն կըպարգևէր նրանց:

Մկօն մի վայրկեանում յիշեց Հովոցը և Նախշիրենց նահապետական տունը. այն ընդարձակ հաստապինդ յարկի տակ յիսուն հոգուց բաղկացած ընտանիքի մէջ ինքն էլ շատ անգամ քնել էր իր նորափեսայութեան երանելի օրերում: Եւ նրա մէջ վերակենդանացան քաղցը ու տխուր պատկերներ. դրանցով նրա սիրտը լցւեց:

Հովոցից մնացած յիշատակի բեկորները իրանք էին և իրանց մէջ միայն Եղօն էր Հովոցի մարդ մնացել. բոլորը փոխւել էին: Նա տեսաւ որ Եղօն է

միայն հաւատարիմ այն նահապետական տան. նրա հաւատը՝ միամիտ, պարզ և մխիթարիչ, աղօթքը, ներողամտութիւնը Մկօյի աչքում բարձրացան, յարգելի, հազւագիւտ դարձան այն տարագրութեան մէջ. նրա մէջ ծագեց մի ներքին յարգանքի զգացմունք դէպի Եղօն, դէպի նրա տոկուն, հաստատակամութիւնը այն բոլորի մէջ, որոնց թողել ու թաղել էին նրանք իրանց չովոցում. «Նա Հովոցի Եղօն է, մենք՝ չէ,—անցաւ նրա մտքով:

Թ.

Առաւօտեան Աղամայ մութը դեռ կանգնած էր. սուլոցը դղրդեցրեց աշխարհքը, և «կազարմայի» առաստաղն ու լուսամուտներն անզամ այն դղրդոցից դողացին ու արձագանք տվին:

Լայն, հաստ դռներից ամբոխն շտապ-շտապ դուրս խուժեց, փարախի ծակից կանաչ արօտ շտապող հօտի նման. սկզբում խմբով էին առաջ գնում, յետոյ մաս-մաս, յետոյ հատ-հատ և բազմութիւնը հալում, նօսրանում, անյայտանում էր հանքում այս փոսի մէջ, այն չանի տակ, այս բուրգի անկիւնում, այն ճախարակի ետևը: Մկօն էլ ամբոխի մէջ էր. անքուն, յոգնած, խառնամիտ գլխով, հիւանդ հոգով՝ նա գնում էր հանքային կեանքի սովորական տատանումների մէջ խառնւելու, ծածկւելու, անյայտանալու...

Խանութի ներսում և գրսում կեանքը նոյնպէս նոր կենդանութիւն և աշխոյժ կերպարանք էր ստացել. լուսամուտներն արեգակի ճառագայթների տակ կոտրտում, փայլվում էին և նայողի երեսին անխտիր ժպտում ու հրճում էին:

Պրիկաշչիկները ներսում գլխապատառ ներս խուժող բազմութեան համար կտրում, կշռում, չափում, փաթաթում էին, իսկ դրսում կայտառ խո-

հարարուհիները, խումբ-խումբ այստեղ կանգնած, այնտեղ կրթնած՝ զրուցում, քրքջում, կոտրատում էին և իրանց գիշերւայ ու վաղորդեան տպաւորութիւնները մէկը միւսին պատմում. շատերն էլ նրանցից նոր էին գալիս շարան-շարան հեռու տեղերից. նրանց խայտարդէտ վերնազգեստներով շըր-ջապատի տարածութիւնը զարդարւել էր և հեռուից նայողին թւում էր, թէ նրանք շարժուն ծաղիկներ լինէին ցրւած սև մազութի աշխարհքում, ճահիճների շուրջը, կոյուղիների ափին:

Լոյսը բացւել էր. հանքային կեանքը եռում էր ամենուրեք. նա կլանում էր հանդիպողին, և ինքը, հսկայական կոհակներ ստեղծելով, առաջ թաւալուում:

Արտասպութիւն «Արօրից»



10  
Gloria dei gloriosi sacerdotum et reliquorum  
beatorumque, cuiusque deo, propterea beatitudine gloriosa  
et dignitatem deorumque in mundis et celis, et illi  
de deitate. Nam tempore illius isti sunt prestatissimi  
etiam sancti, atque sacerdotum adhuc et ipsorum dignitatem  
et beatitudinemque in gloriam et celum, vel de  
tempore et illi permaneant, quod est in eternum, immutabile  
et inalterabile, sicut enim quod est in celo. Alii ad hanc eternitatem  
venient de mortuis, alii ex morte de hunc tempore  
venient, neque aliquis absque eis permanet  
et non permanet nisi venient, sed permanet qui  
est in eternitate, non venient, sed permanet qui  
est in eternitate, non venient, sed permanet qui

est in eternitate.

Գի՞ւլ 10 կօգ.

Հեղինակի հասցեն՝ Շոշա, Арм. Духовная Семинария, учит.  
Григорию Теръ-Погосянъ.



58714